ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հուլիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

95
(3304)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է ԿՈՒՏԱԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի եւ նրա ընտանիքի անդամների վերջին տարիների հայտարարագրերը՝ սկսած 2017 թվականից: Եթե 2018-ին Տիգրան Ավինյանի տարեկան եկամուտը կազմում էր 13 մլն դրամ, ապա 2025թ. հայտարարագրում թիվը 4.2 անգամ մեծացել է՝ դառնալով տարեկան 57 մլն-ից ավել: Սա հայտարարագրված եկամուտն է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ավինյանի հայտարարագրերում տարեցտարի ավելացել են եկամուտները, կրիպտոակտիվները: Ընտանիքի բիզնեսներն ու ակտիվները եւս ընդլայնվել ու ընդլայնվել են:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Տիգրան Ավինյանի առաջին հայտարարագրերը ներկայացվել են 2017-2018 թվականներին: 2017 թվականին, երբ նա դեռեւս պետական պաշտոն չէր զբաղեցնում եւ 28 տարեկան էր, հայտարարագրել էր շուրջ 30 մլն դրամ եկամուտ: Քաղաքապետարանի ներկայացրած պարզաբանման համաձայն՝ հենց այդ ժամանակահատվածում Ավինյանն ու նրա հայրը շուրջ 80 հազար ԱՄՆ դոլարի ներդրում էին կատարել կրիպտոարժույթներում, իսկ հետագայում ընտանիքին պատկանող ընկերություններից մեկի միջոցով հիմնել էին արեւային կայան, որի արտադրած էլեկտրաէներգիան օգտագործվում է կրիպտոարտադրության համար:

2018 թվականի իշխանափոխությունից հետո արդեն փոխվարչապետ նշանակված Ավինյանը հայտարարագրել էր մեկ ավտոտնակ, շուրջ 600 հազար դրամ եւ 2 475 ԱՄՆ դոլար բանկային միջոցներ, 7 հազար ԱՄՆ դոլարի արժեթղթեր, ինչպես նաեւ մոտ 15 հազար ԱՄՆ դոլարի եկամուտ: Նույն տարվա տարեկան հայտարարագրում նրա եկամուտը կազմել էր 13 մլն 771 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մարտի 1-ի գործով անցնող ոստիկանության նախկին բարձրաստիճան պաշտոնյաները փաստացի փակուղու առաջ են կանգնել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2018 թվականի հեղափոխությունից հետո իրավապահների ուշադրության կենտրոնում հայտնված ոստիկանության նախկին պաշտոնյաները մինչ օրս չեն կարողանում դատարաններում հասնել իրենց համար ցանկալի արդյունքի: Մասնավորապես, Մարտի 1-ի գործով մեղադրյալ նախկին պաշտոնյաները փորձում են ազատվել իրենց նկատմամբ կիրառված «բացակայելու արգելք» խափանման միջոցից, որը թույլ չի տալիս լքել Հայաստանի Հանրապետությունը: Սակայն դատարանները հետեւողականորեն մերժում են նրանց միջնորդությունները՝ պատճառաբանելով, որ շարունակում է առկա մնալ հնարավոր փախուստի ռիսկը: Հիշեցնենք, որ այս տարվա հունվարի 14-ին դատարան էր ուղարկվել ՀՀ ոստիկանության պետի նախկին տեղակալ Սաշա Աֆյանի նկատմամբ հարուցված քրեական գործը: Ըստ մեղադրանքի՝ նա 2008 թվականի մարտի 1-ին, անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանները, ՀՀ ոստիկանության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից Երեւանի «Ազատության» հրապարակում անցկացվող խաղաղ հավաքի ցրումը՝ բռնության եւ հատուկ միջոցների կիրառմամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



ԲՀԿ անդամ Արեգնազ Մանուկյանը կալանավայրից հայտնում է. «Թեեւ ձեզ հայտնի են արդեն քաղաքական հետապնդումների մոտիվն ու ոգին, եւ պատկերացնում եմ, որ այլեւս չեք զարմանում ամենօրյա բռնաճնշումներից, ուզում եմ նախ ասել ամենապարզ ու ամենակարեւոր բանը: Ես որեւէ հանցանք չեմ կատարել: Ես չեմ արել ոչինչ, որի համար իրավական կամ նույնիսկ բարոյական պատասխանատվության պիտի կանչվեմ: Ես չեմ արել ոչինչ ընդդեմ իմ հայրենիքի ու իմ պետության՝ անկախ այն ցնորամիտ ենթադրություններից, որոնք կան իմ շինծու մեղադրանքում: Ես հասկանում եմ, որ շատերդ գուցե շփոթված եք «պետական գաղտնիքի» խորհրդավոր շղարշից, շատերդ կաշկանդված եք զգում նման մեղադրանքի լոկ գոյությունից, բայց վստահեցնում եմ ձեզ, որ ժամանակն ու փաստերը ապացուցելու են իմ անմեղությունը: Եւ ուստի շնորհակալ եմ բոլորին, ովքեր մեկ վայրկյան անգամ կաշկանդված չեն զգացել բարձրաձայնելու իմ քաղաքական հետապնդման մասին, շնորհակալ եմ յուրաքանչյուրին, ով աջակցել է ինձ, եւ առհասարակ այն մարդկանց, ովքեր օրնիբուն պայքարում են Հայաստանում քաղբանտարկյալների ազատության համար: Ինձ կալանավորելու միջնորդությունում չկա բացարձակապես որեւէ փաստական հիմք:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Վաղարշյան փողոցում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւս 2 անձի նկատմամբ՝ սպանության փորձի եւ խուլիգանության հոդվածներով: Այս պահի դրությամբ վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 3 անձի նկատմամբ, որոնցից մեկը ձերբակալվել է՝ դատարան ներկայացնելու համար, մյուսի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, գրավը եւ բացակայելու արգելքը: Հիշեցնենք, որ Shamshyan.com-ն ավելի վաղ հայտնել էր, որ դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված պարկուճներ, գնդակ, վնասված ավտոմեքենաներ: Ավտոմեքենաներից մեկի վրա կրակոցի հետք է եղել, մեկ այլ ավտոմեքենայի վրա՝ արնանման հետքեր, հայտնաբերվել է նաեւ կացնի պոչ, որի վրա նույնպես՝ արնանման հետքեր: Բացի այդ, դեպքի վայրում գլխարկներ, հողաթափեր են գտել, վրան՝ արնանման հետքեր: Իսկ ի՞նչն է եղել Վաղարշյան փողոցի 24/6 շենքի բակում կրակոցների պատճառը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ մեքենաներ են բակի հատվածում վթարի ենթարկվել, եւ վթարի ենթարկված մեքենաների վարորդները դուրս են եկել ու սկսել են միմյանց մեղադրանքներ հնչեցնել, ճիշտ ու սխալի հարց բարձրացնել, հնչել են հայհոյանքներ, որից հետո բանը հասել է փայտով, քարով միմյանց հարվածելուն ու կրակոցներ արձակելուն:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի հետ:

- Պարոն Սուքիասյան, ողջունում եմ Ձեզ մեր տաղավարում: Անդրադառնանք «-Մայր Հայաստան» կուսակցության շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Նախընտրական փուլում կալանավորվեց կուսակցության առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը, այնուհետեւ՝ նաեւ կուսակցության անդամ Արեգնազ Մանուկյանը: Ինչպե՞ս եք գնահատում այս զարգացումները:

- Մեր գնահատմամբ՝ տեղի ունեցածը քաղաքական ուղղորդված գործընթաց է: Ակնհայտ է, որ այս ամենը վերեւից տրված քաղաքական պատվերի արդյունք է: Հատկանշական է, որ նույնիսկ արձակուրդում գտնվող վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակայնորեն անդրադարձավ իրավապահ համակարգում ընթացող գործընթացներին, ինչը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Փաստաբանները, որոնք գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն ունեն, նշում են, որ իրականում մեղադրանքի բավարար հիմքեր չկան: Սակայն, գաղտնիության ռեժիմի պատճառով նրանք չեն կարող հրապարակել գործի մանրամասները: «Մայր Հայաստանը» եղել եւ մնում է իշխանությունների ամենակոշտ ընդդիմախոսներից մեկը, իսկ Անդրանիկ Թեւանյանը՝ գաղափարական առումով իշխանությունների ամենասուր քննադատներից: Հենց այդ պատճառով էլ առաջին հարվածը հասցվեց նրան:

- Դուք նաեւ անդրադարձաք ձերբակալության ձեւին: Ի՞նչ նկատի ունեք:

- Անդրանիկ Թեւանյանը սեփական կամքով ներկայացել էր Քննչական կոմիտե: Քննչականի մուտքից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա նրան ձեռնաշղթաներ հագցրեցին: Դա որեւէ գործնական անհրաժեշտություն չուներ եւ, մեր կարծիքով, բացառապես ցուցադրական բնույթ էր կրում՝ հանրային տպավորություն ստեղծելու նպատակով: Այնուհետեւ սկսվեցին նոր գործողություններ՝ խուզարկություններ, հարցաքննություններ, իսկ հետո նաեւ Արեգնազ Մանուկյանի կալանավորումը: Մենք կարծում ենք, որ այս ամենը նպատակ ուներ ցույց տալու, թե իբր քննությունը շարունակվում է, որպեսզի հնարավոր լինի երկարաձգել Անդրանիկ Թեւանյանի կալանքի ժամկետը:

- Թե՛ Անդրանիկ Թեւանյանին, թե՛ Արեգնազ Մանուկյանին առաջադրվել են բավական ծանր մեղադրանքներ՝ կապված պետական դավաճանության եւ գաղտնի տեղեկությունների փոխանցման հետ: Ինչո՞ւ եք պնդում, որ սա քաղաքական հետապնդում է:

- Նախ՝ մեղադրանքի ծանր լինելը դեռ չի նշանակում, որ այն հիմնավորված է: Ես այստեղ կհղվեմ Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանի գնահատականին, ով նշել էր, որ այս գործից քաղաքական պատվերի հոտ է գալիս: Նրա խոսքով՝ վերջին տարիներին նման հոդվածներով հարուցված բազմաթիվ գործեր այդպես էլ դատարան չեն հասել եւ հիմնականում ծառայել են քարոզչական նպատակների: Մեր համոզմամբ՝ այս գործն էլ նույն տրամաբանության մեջ է: Քաղաքական գործիչներին ծանր մեղադրանքներ են ներկայացվում, սահմանվում է գաղտնիության ռեժիմ, փաստաբանները սահմանափակվում են հրապարակային մեկնաբանություններում, եւ արդյունքում հասարակությունը լսում է միայն իշխանությունների ներկայացրած տարբերակը:

- Ձեր կարծիքով՝ հասարակության վերաբերմունքը փոխվե՞լ է «Մայր Հայաստանի» նկատմամբ:

- Ոչ: Ես նման փոփոխություն չեմ տեսնում: Հանրության մեծ մասը չի վստահում իշխանությունների ներկայացրած մեղադրանքներին: Եթե հիշենք վերջին տարիների քաղաքական զարգացումները, ապա բազմաթիվ դեպքերում հասարակությունը տեսել է աղմկահարույց մեղադրանքներ, որոնք հետագայում որեւէ արդյունքի չեն հանգեցրել:

- Ի՞նչ քայլեր եք պատրաստվում իրականացնել առաջիկայում: Հնարավո՞ր են բողոքի ակցիաներ:

- Մեր գործողությունների շրջանակը բավական լայն է: Արդեն ձեւավորվել է քաղաքական հետապնդումների զոհերի հարցերով իրավական հանձնախումբ, որը համագործակցելու է միջազգային կազմակերպությունների, դեսպանատների եւ իրավապաշտպան կառույցների հետ: Չենք բացառում նաեւ հանրային ակցիաներ, պիկետներ եւ այլ միջոցառումներ: Մեր նպատակն է միջազգային հանրությանը ներկայացնել այս գործերի վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվություն եւ փաստական գնահատականներ:

- Ի՞նչ զարգացումներ եք ակնկալում այս քրեական գործերով:

- Ես կրկին կհղվեմ փաստաբանների գնահատականներին: Նրանց խոսքով՝ որպես այդպիսին մեղադրանքի առարկա գոյություն չունի: Հետաքրքիր է նաեւ, որ սկզբում լայնորեն շրջանառվում էր «պետական գաղտնիք» ձեւակերպումը, սակայն, ըստ փաստաբանների, հետագայում այն նույնիսկ չի ներառվել մեղադրանքի բովանդակության մեջ: Սա եւս բազմաթիվ հարցեր է առաջացնում գործի հիմնավորվածության վերաբերյալ:

- Ի՞նչ կարգավիճակում են այժմ Անդրանիկ Թեւանյանը, Գագիկ Ծառուկյանը եւ Արեգնազ Մանուկյանը:

- Անդրանիկ Թեւանյանն ու Գագիկ Ծառուկյանը գտնվում են «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում, իսկ Արեգնազ Մանուկյանը՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Նրանց տեսակցելու իրավունք այս պահին ունեն միայն փաստաբանները: Ընտանիքի անդամներին տեսակցությունները սահմանափակված են, ինչը եւս մտահոգիչ է: Արեգնազ Մանուկյանն ունի անչափահաս երեխա, որն արդեն երկար ժամանակ զրկված է մոր հետ շփվելու հնարավորությունից:

- Ի՞նչ աջակցություն եք ակնկալում մյուս ընդդիմադիր քաղաքական ուժերից:

- Մենք ակնկալում ենք ոչ միայն հայտարարություններ, այլեւ համակարգված համագործակցություն: Հենց այդ նպատակով էլ ձեւավորվել է իրավական հանձնախումբը, որը կգբաղվի բոլոր այն անձանց հարցերով, որոնց մենք համարում ենք քաղաքական հետապնդման ենթարկված: Այն իրականացնելու է իրավական, տեղեկատվական եւ միջազգային աշխատանք՝ փորձելով հարցը ներկայացնել թե՛ հայ հասարակությանը, թե՛ միջազգային կառույցներին:

- Վերջում անդրադառնանք ընդդիմադիր ուժերի կողմից մանդատները վերցնելու հարցին: Ինչպե՞ս եք գնահատում այդ որոշումը:

- Կարծում եմ՝ այս փուլում շատ ավելի կարեւոր են Հայաստանի առջեւ կանգնած ռազմավարական մարտահրավերները, քան մանդատ վերցնելու կամ չվերցնելու հարցը: Իհարկե, այդ հարցի շուրջ կարող են լինել տարբեր տեսակետներ, սակայն, եթե ընդդիմությունը որոշում է աշխատել խորհրդարանում, ապա հասարակությունն ակնկալում է ոչ թե պարզապես խորհրդարանական գործունեություն, այլ իրական արդյունք՝ իշխանափոխության ուղղությամբ: Եթե այդ նպատակն իրականացնելու ծրագիր կա, ապա այն պետք է արտահայտվի ողջամիտ ժամկետներում՝ հստակ քաղաքական քայլերով: Հակառակ դեպքում հասարակության դժգոհությունը միայն կաճի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

74%-Ը՝ ԱՄՆ-ԻՆ, 26%-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Երեկ առանց քննարկման եւ առանց հարց ու պատասխանի ՀՀ կառավարությունը միաձայն հաստատեց Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ «Թրամփի միջազգային խաղաղության եւ բարգավաճման ուղու» (TRIPP) շրջանակային համաձայնագրի վավերացման գործընթացը սկսելու մասին որոշումը:

Փաստաթուղթը սահմանված կարգով կուղարկվի Սահմանադրական դատարան: Կառավարության նիստում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նշել է, որ եթե ՍԴ-ն արձանագրի միջազգային պայմանագրի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, ապա գործընթացը կտեղափոխվի Ազգային ժողով: Նախարարի խոսքով՝ համաձայնագրով Հայաստանը եւ ԱՄՆ-ն նպատակ ունեն Հարավային Կովկասում զարգացնել տրանսպորտային ենթակառուցվածքները եւ տարածաշրջանային առեւտրային կապերը՝ նպաստելով խաղաղության ամրապնդմանը:

Միրզոյանը հատուկ անդրադարձել է TRIPP զարգացման ընկերության կառուցվածքին՝ նշելով, որ ընկերությունը կստանա տվյալ գոտիներում հողօգտագործման եւ կառուցապատման իրավունք՝ նախնական 49 տարի ժամկետով: Նրա ներկայացմամբ՝ ընկերության բաժնեմասերը կբաշխվեն հետեւյալ կերպ.

ԱՄՆ-ին կպատկանի բաժնեմասերի 74 տոկոսը,

Հայաստանին՝ 26 տոկոսը:

Միաժամանակ նշվել է, որ 49 տարվա նախնական ժամկետի ավարտից հետո կողմերի համաձայնությամբ հնարավոր կլինի երկարաձգել պայմանագիրը եւս 50 տարով: Այդ դեպքում նախատեսվում է, որ Հայաստանի բաժնեմասը ընկերությունում կավելանա մինչեւ 49 տոկոս: ՀՀ արտաքին գործերի նախարարը հայտնել է նաեւ, որ TRIPP-ի ստեղծման գործընթացն ամբողջությամբ ավարտելու համար դեռեւս անհրաժեշտ է ընդունել եւս երկու փաստաթուղթ՝ բաժնետերերի միջեւ պայմանագիրը եւ TRIPP զարգացման ընկերության կանոնադրությունը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԵԿՆՈՒՄ ԵՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի ստորագրած որոշումով ՀՀ պետական պահպանության ծառայության պետ Արթուր Գասպարյանին տրամադրվել է ամենամյա արձակուրդ: Որոշման համաձայն՝ Արթուր Գասպարյանին տրամադրվել է 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 8 աշխատանքային օր տեւողությամբ:

Պետական պահպանության ծառայության պետը արձակուրդում կլինի 2026 թվականի հուլիսի 20-ից մինչեւ հուլիսի 29-ը ներառյալ:

Նույն որոշմամբ սահմանվել է, որ Արթուր Գասպարյանի արձակուրդի ընթացքում նրան կփոխարինի ՀՀ պետական պահպանության ծառայության պետի տեղակալ Արմեն Հակոբյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը ստորագրել է որոշում, որով վարչապետի օգնական Կարինե Դավոյանին եւս տրամադրվել է ամենամյա արձակուրդ:

Որոշման համաձայն՝ Կարինե Դավոյանին տրամադրվել է 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 5 աշխատանքային օր, ինչպես նաեւ 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 4 աշխատանքային օր տեւողությամբ: Դավոյանը կգտնվի արձակուրդում 2026 թվականի հուլիսի 23-ից մինչեւ 2026 թվականի օգոստոսի 4-ը ներառյալ:

Ս. Գ.

ՄՈՍԿՎԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ

Ռուսաստանը պատրաստ է աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին, այդ թվում՝ խաղաղության պայմանագրի կնքման, սահմանների դելիմիտացիայի եւ հաղորդակցությունների ապաշրջափակման հարցերում:

Այս մասին հայտարարել են ՌԴ արտաքին գործերի նախարարությունից՝ Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի՝ Ռուսաստան կատարելիք պաշտոնական այցի նախաշեմին:

«Մեզ համար կարեւոր են Հարավային Կովկասում խաղաղությունն ու կայունությունը: Ինչպես եւ նախկինում, պատրաստ ենք պահանջված աջակցություն ցուցաբերել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների ամբողջական կարգավորման գործում, այդ թվում՝ խաղաղության պայմանագրի կնքման, սահմանների դելիմիտացիայի եւ հաղորդակցությունների ապաշրջափակման հարցերում»,- ասված է ՌԴ ԱԳՆ հաղորդագրությունում:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը եւս մեկ անգամ ընդգծել է, որ Մոսկվան պատրաստ է ներգրավված լինել հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Հայաստանում Նորվեգիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Բերգլյոտ Հովլանդին՝ դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ: Ողջունելով դեսպանին՝ նախագահ Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել նրան Հայաստանի եւ Նորվեգիայի միջեւ հարաբերությունների զարգացման եւ ամրապնդման գործում ունեցած ավանդի համար: Նախագահն ընդգծել է, որ վերջին տարիներին հայ-նորվեգական հարաբերությունների զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման համար: Այս համատեքստում նախագահը կարեւորել է հատկապես տնտեսական համագործակցության ակտիվացումը, ինչպես նաեւ առեւտրի, բարձր տեխնոլոգիաների, արհեստական բանականության եւ այլ ոլորտներում փոխգործակցության զարգացման հեռանկարները:

Դեսպան Հովլանդը, իր հերթին, բարձր է գնահատել Հայաստանի եւ Նորվեգիայի միջեւ համագործակցության ընդլայնվող օրակարգը՝ առանձնացնելով մշակութային ոլորտում ու երիտասարդության հարցերով համագործակցության, ինչպես նաեւ COP17-ի շրջանակում հայ-նորվեգական գործընկերության կարեւորությունը: Նա նաեւ ընդգծել է Հայաստան-Հյուսիսային Եվրոպա-Բալթյան երկրներ համագործակցության ձեւաչափի նշանակությունը: Դեսպանը ողջունել է Հայաստանում անցկացված վերջին խորհրդարանական ընտրությունները՝ նշելով, որ դրանց արդյունքները վերահաստատում են հայ ժողովրդի հավատարմությունը խաղաղության, ժողովրդավարության եւ բարեփոխումների օրակարգին: Նա վերահաստատել է Նորվեգիայի աջակցությունը ժողովրդավարական բարեփոխումների գործընթացին: Ջրուցակիցները մտքեր են փոխանակել երկկողմ համագործակցության օրակարգի հարցերի, ինչպես նաեւ տարածաշրջանային զարգացումների շուրջ:

Հանդիպման ավարտին նախագահ Վահագն Խաչատուրյանը եւս մեկ անգամ շնորհակալություն է հայտնել դեսպան Բերգլյոտ Հովլանդին արդյունավետ համագործակցության համար եւ հաջողություններ մաղթել հետագա գործունեության մեջ:

ՈՎ ԿՓՈԽԱՐԻՆԻ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը արձակուրդ կգնա: ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը ստորագրել է որոշումը, որով ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանին տրամադրվել է 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը:

Որոշման համաձայն՝ նախարարին տրամադրվել է 10 աշխատանքային օր տեւողությամբ արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 20-ից մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ:

Փոխվարչապետի որոշմամբ՝ Վահե Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում ֆինանսների նախարարի պարտականությունները կկատարի ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը:

Ս. Գ.

REUTERS

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՓՈԽԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Reuters գործակալությունը հրապարակել է հոդված, որտեղ նշվում է, որ Ադրբեջանն ու Հայաստանը, ըստ Բաքվի պաշտոնյայի, գտնվում են «իրական խաղաղության» փուլում եւ վերականգնում են առեւտրային կապերը տասնամյակների հակամարտությունից հետո, սակայն Ադրբեջանը շարունակում է պահանջել Հայաստանի Սահմանադրության փոփոխություն՝ վերջնական խաղաղության պայմանագրի ստորագրման համար:

Reuters-ի հրապարակման համաձայն՝ Ադրբեջանի նախագահի օգնական, արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւը գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է, որ երկու երկրների միջեւ խաղաղությունը «միայն թղթի վրա գրված հայտարարություն չէ, այլ իրականություն է»:

Նրա խոսքով՝ դրա վկայություններից մեկը Հայաստանի հետ ուղիղ շփումների եւ երկկողմ առեւտրի աճն է, այդ թվում՝ Ադրբեջանից Հայաստան նավթամթերքի մատակարարումների ավելացումը:

Միեւնույն ժամանակ, Հաջիեւը նշել է, որ Բաքուն շարունակում է պնդել Հայաստանի Սահմանադրության փոփոխության հարցում: Նրա խոսքով՝ Ադրբեջանի համար կարեւոր է, որ Հայաստանի իրավական դաշտից վերացվեն այն դրույթները, որոնք Բաքուն ընկալում է որպես տարածքային պահանջներ Ադրբեջանի նկատմամբ:

«Այդ հարցի լուծումից հետո մենք կարծում ենք, որ վերջնական խաղաղության համաձայնագրի ստորագրման համար այլեւս խոչընդոտներ չեն լինի»,- Reuters-ին ասել է Հաջիեւը:

Reuters-ը հիշեցնում է, որ Հայաստանը եւ Ադրբեջանը տասնամյակներ շարունակ հակամարտել են հիմնականում Լեռնային Ղարաբաղի շուրջ: Կողմերը նախնական խաղաղության համաձայնության են հասել անցած տարվա օգոստոսին՝ ԱՄՆ միջնորդությամբ:

Գործակալության հրապարակման համաձայն՝ Բաքվի հիմնական մտահոգությունը կապված է Հայաստանի Սահմանադրության նախաբանի հետ, որտեղ հղում կա նախկին՝ խորհրդային շրջանի փաստաթղթի, որը վերաբերում էր Հայաստանի եւ այն ժամանակ Խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի վերամիավորմանը:

Հաջիեւը նաեւ անդրադարձել է տարածաշրջանային հաղորդակցության ծրագրերին՝ նշելով, որ Ադրբեջանը ԱՄՆ-ից ստացել է «լուրջ եւ դրական ազդանշաններ», որ Վաշինգտոնի աջակցությամբ նախատեսվող տրանսպորտային միջանցքի շինարարությունը կարող է սկսվել այս աշնանը:

Խոսքը «Թրամփի միջազգային խաղաղության եւ բարգավաճման ուղու» (TRIPP) մասին է: Reuters-ը գրում է, որ նախատեսվող շուրջ 43 կմ երկարությամբ երթուղին անցնելու է Հայաստանի տարածքով եւ Ադրբեջանին հնարավորություն է տալու ուղիղ կապ հաստատել Նախիջեւանի եւ Թուրքիայի հետ:

Հաջիեւի խոսքով՝ Ադրբեջանի դիրքորոշումն այն է, որ TRIPP նախագիծը պետք է իրականացվի հնարավորինս արագ: Նա նշել է, որ Ադրբեջանի հարավ-արեւմտյան Զանգելանի շրջանում ենթակառուցվածքների շինարարությունը հիմնականում կավարտվի մինչեւ 2026 թվականի վերջը, որից հետո այն կարող է միացվել Հայաստանի եւ Թուրքիայի նախատեսվող ենթակառուցվածքներին:

Միաժամանակ Reuters-ը նշում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է Սահմանադրությունը փոխելու նպատակով հանրաքվե անցկացնելու ցանկության մասին եւ հայտնել, որ նոր Սահմանադրության նախագիծը կհրապարակվի մինչեւ այս տարվա վերջ: Սակայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը չունի հանրաքվե նախաձեռնելու համար անհրաժեշտ սահմանադրական մեծամասնությունը, իսկ ընդդիմության դիրքորոշումը մնում է անորոշ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հուլիսի 16-ի գիշերը ռուսական զինված ուժերը խմբային հարված են հասցրել Կիեւում եւ Օդեսայի մարզում գտնվող ռազմական նշանակության օբյեկտներին:

ՌԴ ՊՆ-ի հաղորդմամբ՝ հարվածների հետեւանքով խոցվել են Կիեւում գործող ուկրաինական ռազմարդյունաբերական ձեռնարկություններ, որոնք, ըստ ռուսական կողմի, ներգրավված են եղել մեծ եւ միջին հեռահարության անօդաչու թռչող սարքերի արտադրության եւ պահպանման աշխատանքներում:

Գերատեսչության տվյալներով՝ հարվածի տակ են հայտնվել նաեւ «Ռապիդ» լոգիստիկ ընկերության օբյեկտը եւ «Կիեւ-1» ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկության պահեստը, որտեղ, Մոսկվայի պնդմամբ, հավաքվում են «Լյուտի» եւ «Լելեկա-100» տեսակի անօդաչու թռչող սարքերը:

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը նաեւ հայտարարել է, որ հարվածներ են հասցվել Օդեսայի եւ Յուժնիի նավահանգիստների ենթակառուցվածքներին, որոնք, ըստ ռուսական կողմի, օգտագործվում են ռազմական նշանակության բեռների եւ վառելիքաքսուքային նյութերի տեղափոխման ու պահպանման նպատակով:

Բացի այդ, ՌԴ ՊՆ-ի պնդմամբ, խոցվել են դեպի Չեռնոմորսկի նավահանգիստ շարժվող ծովային նավը եւ Ուկրաինայի զինված ուժերի հատուկ գործողությունների ուժերի արագընթաց նավակը՝ Օձերի կղզու հարակից ջրային տարածքում:

Ռուսական կողմի հաղորդմամբ՝ հարվածների ընթացքում կիրառվել են ցամաքային եւ օդային տեղակայման մեծ հեռահարության բարձր ճշգրտության զինատեսակներ, ինչպես նաեւ անօդաչու թռչող սարքեր:

Ուկրաինական կողմն այս հայտարարությունների վերաբերյալ դեռեւս պաշտոնական մեկնաբանություն չի ներկայացրել:

Ա. Վ.

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ Է ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ

ԱՄՆ-ն վերականգնել է Իրանի նավահանգիստների ռազմածովային շրջափակումը եւ ուժեղացրել ավիահարվածները՝ պատճառաբանելով Հորմուզի նեղուցով անցնող նավերի նկատմամբ Իրանի գործողությունները: Ամերիկյան հարվածների հետեւանքով Իրանի պաշտոնյաների տվյալներով՝ զոհվել է առնվազն 7 զինծառայող, վիրավորվել՝ ավելի քան 260 մարդ:

ԱՄՆ-ի եւ Իրանի փոխադարձ հարվածները վտանգում են նախկինում ձեռք բերված միջանկյալ համաձայնագիրը եւ մեծացնում են լայնածավալ պատերազմի վտանգը: Իրանը սպառնացել է դադարեցնել Մերձավոր Արեւելքից նավթի եւ գազի արտահանումը՝ հայտարարելով, որ էներգակիրների արտահանումը կլինի «բոլորի համար կամ ոչ մեկի»:

ԱՄՆ-ն հայտնել է, որ հարվածներ է հասցրել Իրանի ռազմական եւ հրթիռային օբյեկտներին, այդ թվում՝ Հորմուզի նեղուցի ռազմավարական հատվածներում: Իրանը հայտարարել է, որ պատրաստվում է պատասխան տալ:

Հորմուզի նեղուցը շարունակում է մնալ հակամարտության գլխավոր կետը. դրա միջով անցնում է համաշխարհային նավթի եւ գազի առեւտրի մոտ մեկ հինգերորդը: Լարվածության աճը արդեն հանգեցրել է նավթի գների բարձրացմանը:

Թրամփը կրկին սպառնացել է հարվածել Իրանի քաղաքացիական ենթակառուցվածքներին՝ կամուրջներին եւ էլեկտրակայաններին, եթե Թեհրանը չվերադառնա բանակցություններին: Տարածաշրջանային միջնորդները փորձում են կողմերին վերադարձնել բանակցային սեղանի շուրջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՌԻԿ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Է ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

Գագիկ Ծառուկյանի փաստաբան Էմին Խաչատրյանը հայտարարությամբ է հանդես եկել.

«Իմ կողմից նախկինում Գագիկ Ծառուկյանի մեղադրանքը հերքող փաստաթղթերի հրապարակման շարունակություն.

Պաշտպանության կողմը, համագործակցելով Իրանի Իսլամական Հանրապետությունում գործող գործընկեր փաստաբանների հետ, ձեռք է բերել սույն քրեական վարույթի համար բացառիկ նշանակություն ունեցող փաստաթղթեր, որոնք, պաշտպանության կողմի գնահատմամբ, ուղղակիորեն հակասում են Գագիկ Կոլյայի Ծառուկյանին առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերին:

Մասնավորապես, 2026 թվականի փետրվարի 14-ին «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերությունը Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմիններին ներկայացրել է բողոք Արման Օլամայիի, Էրֆան Օլամայիի եւ Համլետ Թումանյանի դեմ՝ խարդախության, գույքն ապօրինի եղանակով կամ արտոնությունների չարաշահման միջոցով ձեռք բերելու, կեղծարարության, վստահության չարաշահման եւ փողերի լվացման հատկանիշներով: Բողոքին կից ներկայացվել են այն հիմնավորող բազմաթիվ փաստաթղթեր եւ ապացույցներ:

Այնուհետեւ, 2026 թվականի մայիսի 31-ին «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերությունը Իրանի իրավասու մարմիններին ներկայացրել է եւս մեկ բողոք՝ արդեն Արման Օլամայիի, Էրֆան Օլամայիի, Համլետ Թումանյանի եւ Հաջիալի Օլամայի դեմ՝ խարդախության, գույքն ապօրինի եղանակով կամ արտոնությունների չարաշահման միջոցով ձեռք բերելու, կեղծարարության, վստահության չարաշահման եւ փողերի լվացման հատկանիշներով:



Դատական Իշխանություն /առկա է տարբերանշանը/

Դատական Իշխանության հարթակ՝ Տեղեկատվություն գործի վերաբերյալ
Գործի հ.՝ 14056892000154709 1
Դիմումի ամսաթիվը՝ 28.06.2026 /արեգակնային տոմարով՝ 07.04.1405/ թ., 11:29
Երկրորդական շարք՝ 1
Դիմումի տեսակը՝ Գործի ընթացքի մասին

Սույն գործի համար գրանցված վերջին փոփոխությունը վերաբերում է 23.06.2026 /արեգ. տոմ.՝ 02.04.1405/ թ. ժամը 11:08-ին:

Մուտքագրված զարտնաբառը վերաբերում է Մահդի Ջաֆարիանեժադ Ղաբեհլոռին:

1. Գործով դատական վերահսկողության նիստ է նշանակվել՝ 13.07.2026 /արեգ. տոմ.՝ 22.04.1405/ թ.:

2. Դաս. 14056892000154709 համարի գործը, երկրորդական շարք՝ 1, արխիվային հ.՝ 0500159, նախաքննություն կատարելու հիմքով, առարկան՝ փողերի լվացման, կեղծ պաշտոնական տիտղոսի ու պաշտոնի յուրացման, այլ անձի գույքի յուրացման նպատակով հանցավոր համաձայնության, ապօրինի եղանակով կամ արտոնությունների չարաշահմամբ ու կեղծարարությամբ գույքի ձեռքբերման, վստահության չարաշահման և խարդախության մեղադրանքներով, հացեպգրվեց Թեհրանի թիվ 20 տարածքային շրջանի Հանրային և Հեղափոխության դատախազության քննչական թիվ 1 մասնաճյուղին (նախատեսված՝ միջազգային հարցերով վարույթների համար) և գրանցվեց 02.06.2026 /արեգ. տոմ.՝ 12.03.1405/ թ.:

3. 02.06.2026 /արեգ. տոմ.՝ 12.03.1405/ թ. գործով դատական վերահսկողության

Ներկայացված փաստաթղթերը հիմնավորում են, որ Գագիկ Ծառուկյանին առաջադրված մեղադրանքներն իրականության հետ որեւէ կապ չունեն եւ չեն արտացոլում օբյեկտիվ իրականությունը:

Հ.Գ. Նմանատիպ կարեւորագույն փաստաթղթերի հրապարակումը կլինի շարունակական»:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է դեռեւս 2020 թվականի հունիսի 9-ին Երեւան քաղաքի Մայիսի 9-ի փողոցի բակում մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, Ա.Պ.-ի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

2021 թվականի սեպտեմբերի 29-ին 7 համակատարողների մասով քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել էր դատարան, իսկ սպանությանն օժանդակող անձի՝ Ա.Մ.-ի նկատմամբ հայտարարվել էր հետախուզում:

2026 թվականի հունիսի 25-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից Ա.Մ.-ն հայտնաբերվել եւ ներկայացվել է նախաքննական մարմին:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել են սահմանափակ խոցելիությամբ ինքնաշեն ողորկափող հրազեն հանդիսացող ատրճանակ եւ ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ:

Ա.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանությանն օժանդակելը) եւ Քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով հրազեն եւ ռազմամթերք ձեռք բերելը եւ պահելը):

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ArmLur.am-ը հայտնել է, որ սպանվածը 28-ամյա Աշոտ Պետրոսյանն է, ով հայտնի է «Կյաժ Աշոտ» մականվամբ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում Ներքին գործերի նախարարությունից ստացված հաղորդման հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի անտառտնտեսության տնօրենը, իշխանական կամ ծառայողական լիազորությունները օգտագործելով, կատարել է խարդախություն եւ վստահված գույքի հափշտակություն:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձը, 2023 եւ 2024 թվականների տարբեր ամիսների քաղաքացուն աշխատանքի ընդունելով, իր մոտ պահել է վերջինիս բանկային քարտը, այնուհետեւ ստացված աշխատավարձի մի մասը կանխիկ եղանակով տվել է նրան, իսկ մնացած մասը՝ հափշտակել:

Բացի այդ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի անտառտնտեսության տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձը, մեկ այլ քաղաքացու կողմից աշխատանքի չներկայանալու պայմաններում կեղծ տեղեկություն է ներկայացրել վերջինիս կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ, որի արդյունքում նշված աշխատակցին փոխանցված աշխատավարձի մեծ մասը պահել է իրեն:

Նախաքննության ընթացքում բացահայտվել է նաեւ նույն մասնաճյուղի ավագ անտառապետի կողմից որպես սեզոնային բանվորներ ընդունած 7 քաղաքացիներից խարդախությամբ շուրջ 493.000 ՀՀ դրամի հափշտակության դեպք:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի անտառտնտեսության տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ աշխատակցին՝ 445-րդ հոդվածի 1-ին մասով: Անտառտնտեսության ավագ անտառապետին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐԳ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացնում է՝ նախատեսվում է սահմանել բուլինգի ենթարկված երեխաների հայտնաբերման, պաշտպանության եւ աջակցության կարգը: «e-draft.am» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է ներկայացվել «Բուլինգի ենթարկված երեխաների հայտնաբերման, նրանց պաշտպանության, ուղղորդման եւ նրանց հետ աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը: Նախագծի նպատակն է ստեղծել հստակ, թափանցիկ եւ կանխատեսելի մեխանիզմներ՝ բուլինգի ենթարկված երեխաներին ժամանակին հայտնաբերելու, պաշտպանելու եւ անհրաժեշտ աջակցություն տրամադրելու համար: Նոր կարգը կկիրառվի երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող կենտրոններում, կրթական (այդ թվում՝ նախադպրոցական եւ արտադպրոցական) հաստատություններում, սպորտային, մշակութային կազմակերպություններում եւ Արդարադատության համակարգում գործող պատժի կամ քրեահրավական ներգործության միջոցներ իրականացնող մարմիններում: Բուլինգը երեխայի նկատմամբ բռնության մասնավոր դրսեւորում է, եւ նման դեպքերի հայտնաբերումը նախատեսվում է իրականացնել հետեւյալ ուղղություններով.

մանկավարժական եւ ուսումնաօժանդակ անձնակազմի, ինչպես նաեւ հոգեբանի կողմից երեխաների միջանձնային շփումների, վարքագծային կտրուկ փոփոխությունների եւ հուզական վիճակի ամենօրյա մշտադիտարկում,

բուլինգի դեպքերի մասին անանուն հայտնելու համար «Վստահության արկղեր»-ի կամ առցանց հարթակների ներդնելու միջոցով,

մեկուսացված կամ թիրախավորված երեխաներին հայտնաբերելու նպատակով հատուկ մշակված հարցազրույցների իրականացում թիմի կողմից,

վստահության մթնոլորտի ձեւավորում, որտեղ երեխան իրեն անվտանգ է զգում հոգեբանին, մանկավարժին կամ թիմի համակարգողին դիմելու՝ սեփական փորձառության կամ այլ երեխայի նկատմամբ կիրառվող բուլինգի հնարավոր դեպքի մասին պատմելու համար:

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ

Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հուլիսի 10-ին մասնակի բավարարել է Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցն ընդդեմ Գոռ Վլադիմիրի Վարդանյանի (քրեական հետապնդում է հարուցվել 18.04.2003 թվականին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ)՝ մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը) եւ նրան փոխկապակցված անձանց: Դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, հօգուտ ՀՀ ենթակա է բռնագանձման՝

128 միլիոն դրամ,

«HYUNDAI SONATA 2.0» մակնիշի տրանսպորտային միջոց,

«KIA SPORTAGE 2.0 I» մակնիշի տրանսպորտային միջոց,

«TOYOTA CAMRY 3.5» մակնիշի տրանսպորտային միջոց,

«VAZ 21121» մակնիշի տրանսպորտային միջոց:

● *Հանրապետությունում հուլիսի 15-ից 16-ը բացահայտվել է մարմնական վնասվածք պատճառելու 11 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

5–ՐԴ ՏԱՐԻՆ Է՝ ԴԱՏՈՒՄ ԵՆ

2021թ.-ի նոյեմբերի 23-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվել է Բերդ համայնքի Այգեձոր գյուղի բնակիչ, «Տավուշ» ՋՕԸ նախկին գործադիր տնօրեն, 1960թ.-ին ծնված Յուրի Որսկանյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նշանակված լինելով «Տավուշ» ՋՕԸ գործադիր տնօրենի պաշտոնում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, ունենալով ընկերության ֆինանսական միջոցները կառավարելու, ֆինանսական փաստաթղթերը ստորագրելու լիազորություն, 2017թ.-ի ամռանը «Տավուշ» ՋՕԸ-ի կողմից Ոսկեվան բնակավայրում կառուցված 1032 մետր երկարությամբ ոռոգման օժանդակ ջրագծի կապակցությամբ 2017թ. հոկտեմբերի 3-ին ներկայացրել է կատարողական ակտ, որի համաձայն՝ ջրագծի կառուցման համար հատկացվել է 6 միլիոն 592 հազար դրամ, կատարողական ակտում նշված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 460 հազար 586.47 դրամ, նշված ջրագծի կառուցման կատարողական ակտում որպես իրականացված աշխատանքներ ներկայացվել է կատարվածից ավելի ծավալով եւ վատնել է 664 հազար 799.65 դրամ՝ «Տավուշ» ՋՕԸ-ին պատճառելով խոշոր չափերի գույքային վնաս: Նրան մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (2 դրվագով) եւ 325 հոդվածի 1-ին մասով: 2024թ. ապրիլի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Մարդանյանը վճռել է ճանաչել Յուրի Որսկանյանի անմեղությունը քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Հենրիկ Միրզոյանի դրվագով) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Յուրի Որսկանյանին մեղավոր ճանաչել քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Սամվել Սարգսյանի դրվագով), նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Քաղաքացիական հայցը՝ Յուրի Որսկանյանից, հօգուտ «Տավուշ» ՋՕԸ-ի 1.059.283.65 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին բավարարել մասնակի՝Յուրի Որսկանյանից հօգուտ «Տավուշ» ՋՕԸ-ի բռնագանձել 140 հազար դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի գումար: Քրեական գործով մեղադրողը վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2024թ. հունիսի 25-ին վերաքննիչ դատարանը որոշել է քրեական գործն ըստ առարկայական ընդդատության փոխանցել վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2025թ. փետրվարի 21-ին որոշել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2024թ. ապրիլի 15-ի դատավճիռն ամբողջությամբ բեկանել եւ վարույթը փոխանցել հակակոռուպցիոն դատարան՝ սահմանված ծավալով նոր քննության: Ներկայումս գործը քննվում է հակակոռուպցիոն դատարանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

10 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել բարձրաստիճան պաշտոնատար անձանց ներկայացրած հայտարարագրերը՝ պարզելու, թե ինչպես են փոխվում նրանց ունեցվածքն ու եկամուտները պաշտոնավարման ընթացքում:

Այս անգամ մեր ուշադրության կենտրոնում ԿԳՄՍ նախարարության Լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանն է, որը պաշտոնը զբաղեցնում է 2023 թվականի նոյեմբերի 30-ից:

Առաջին հայացքից նրա հայտարարագրերում ամեն ինչ չափազանց համեստ է թվում, սակայն թվերը մի շարք հետաքրքիր հարցեր են առաջացնում:

2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Դվոյանը շարունակում է ունենալ նույն երկու անշարժ գույքը.

1. Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարան, որը ձեռք է բերել 2017 թվականին,

2. Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում գտնվող առանձնատուն՝ հողամասով եւ տնտեսական շինություններով, որը ստացել է ժառանգությամբ 2016 թվականին:

Սակայն առավել ուշագրավ են նրա հայտարարագրած դրամական միջոցները:

Բանկային ավանդը՝ ընդամենը 21 դրամ:

Բանկային հաշիվների մնացորդը՝ 7 դրամ:

Այսինքն՝ պաշտոնյան, որը տարվա ընթացքում ստացել է ավելի քան 10 միլիոն դրամ եկամուտ, տարվա ավարտին հայտարարագրել է ընդամենը 7 դրամ բանկային հաշվում եւ 21 դրամ ավանդ:

Եկամուտները՝ մի քանի աղբյուրից

2025 թվականին Սիրանուշ Դվոյանի հայտարարագրված եկամուտը կազմել է 10 միլիոն 304 հազար 4 դրամ:

Դրանցից՝

7 մլն 194 հազար դրամ՝ ԿԳՄՍ նախարարությունից որպես աշխատավարձ,

2 մլն 949 հազար դրամ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից,

160 հազար դրամ՝ «Այբ» կրթական հիմնադրամից քաղաքացիաիրավական պայմանագրով:

Հայտարարագրում նշված չէ որեւէ վարկ կամ փոխառություն:

2024 թվական. եկամուտները գրեթե կրկնապատկվել էին

2024 թվականին Դվոյանի հայտարարագրված եկամուտներն արդեն հասել էին 19 միլիոն 29 հազար դրամի:

Ամենախոշոր վճարումները ստացվել էին՝

ԿԳՄՍ նախարարությունից՝ ավելի քան 14 մլն դրամ,

Հայաստանի ամերիկյան համալսարանից՝ ավելի քան 4,2 մլն դրամ:

Բացի դրանից, նա գումարներ էր ստացել նաեւ մի շարք այլ կազմակերպություններից՝ «Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնից», «Մշակութային եւ սոցիալական նարատիվների լաբորատորիայից», Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից եւ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեից:

Սակայն նույնիսկ այդ տարվա ավարտին նրա ավանդը կրկին կազմել է նույն 21 դրամը:

2023 թվական. 10 միլիոն դրամ ավանդը «անհետացել» է

Ամենահետաքրքիր փոփոխությունը նկատվում է 2023 եւ 2025 թվականների հայտարարագրերի համեմատությունից:

2023 թվականի վերջին Սիրանուշ Դվոյանը հայտարարագրել էր 10 միլիոն դրամ բանկային ավանդ: Բացի դրանից, նրա բանկային հաշիվներում առկա էր ավելի քան 5,5 միլիոն դրամ:

Ընդամենը երկու տարի անց նույն պաշտոնյայի հայտարարագրում ավանդը դարձել է 21 դրամ, իսկ բանկային հաշվի մնացորդը՝ 7 դրամ:

Հայտարարագրերը չեն բացահայտում, թե ինչ նպատակով են օգտագործվել այդ միջոցները կամ ինչի արդյունքում է շուրջ 10 միլիոն դրամանոց ավանդը փաստացի վերացել: Ինքնին նման փոփոխությունը չի նշանակում իրավախախտում, սակայն այն աչքի ընկնող հանգամանք է եւ հանրային հետաքրքրության առարկա, քանի որ պաշտոնատար անձանց հայտարարագրերի նպատակը հենց գույքային փոփոխությունների թափանցիկությունն ապահովելն է:

Ավտոմեքենա, ներդրումներ, բաժնեմասեր՝ չկան

Երեք տարիների հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սիրանուշ Դվոյանը չի հայտարարագրել՝

ավտոմեքենա,
բաժնեմաս որեւէ ընկերությունում,
արժեթղթեր,
ներդրումներ,
թանկարժեք այլ ակտիվներ,
վարկեր կամ փոխառություններ:

Փոխարենը պահպանվել են նույն երկու անշարժ գույքերը, իսկ եկամուտները ձեւավորվել են հիմնականում պետական համակարգում զբաղեցրած պաշտոնից եւ ակադեմիական ու գիտակրթական գործունեությունից:

Միեւնույն ժամանակ, ամենաուշագրավ հարցը շարունակում է մնալ նույնը՝ ինչպե՞ս է ստացվում, որ 2023 թվականին հայտարարագրված 10 միլիոն դրամանոց ավանդը երկու տարի անց վերածվել է ընդամենը 21 դրամի, իսկ բանկային հաշվում տարվա ավարտին մնացել է ընդամենը 7 դրամ: Թեեւ հայտարարագրերը չեն պահանջում ներկայացնել յուրաքանչյուր ծախսի մանրամասները, նման կտրուկ փոփոխությունը բնականաբար հանրային հետաքրքրություն է առաջացնում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում պեսություն-մասնավոր համագործակցությամբ իրականացվում են Կեչառիս վանական համալիրի Սբ. Գրիգոր եկեղեցու բարավորի որմնանկարի (13-րդ դ.) ամրակայման եւ մաքրման աշխատանքները: Դրանք մշտադիտարկելու նպատակով ԿԳՄՍ նախարարության աշխատակիցներն այցելել են համալիրի տարածք:

Սբ. Գրիգոր եկեղեցու որմնանկարի էքսիզային նախագիծը, համաձայն սահմանված կարգի, մշակվել եւ ներկայացվել էր լիազոր մարմնին կից մոնումենտալ արվեստի հուշարձանների հարցերով աշխատանքային խմբի քննարկմանը: Հեղինակը որմնանկարների վերականգնող մասնագետ Աշխեն Պապոյանն է:

Ամրակայման եւ վերականգնման աշխատանքներն իրականացնում է «Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ-ն: Ինչպես որմնանկարները, այնպես էլ Կեչառիս վանական համալիրի հնագիտական ուսումնասիրության, ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքներն իրականացվում են բարերարների՝Վարդանյան եւ Մկրտչյան ընտանիքների կողմից:

Սբ. Գրիգոր եկեղեցու որմնանկարները, համաձայն նախագծի, ամրակայվել եւ մաքրվել են, ինչի ընթացքում ի հայտ են եկել որմնանկարի սյուժեի մանրամասներ, որոնք մինչ վերականգնումը թաքնված էին մրի եւ աղտոտված շերտի տակ:

Բարավորի վրա պատկերված է Բարեխոսության տեսարանը. կենտրոնում Հիսուս Քրիստոսն է, ձախից՝ Աստվածամայրը, աջից՝ Հովհաննես Մկրտիչը, վերեւում՝ կամարին պատկերված են ձախից եւ աջից 6-ական առաքյալներ, իսկ կամարի տակ նույնքան (12) հրեշտակները, որոնց թեւերը միավորվում են Քրիստոսի լուսապսակի վերեւում եւ դառնում ձեռք, ինչը բացահայտվել է որմնանկարի մաքրման արդյունքում: Որմնանկարի վրա, ինչպես նաեւ վերեւում, ներքեւում եւ կողքերից, բազմաթիվ միջնադարյան արձանագրություններ կան:

Որմնանկարի ամրակայման եւ մաքրման աշխատանքները նախարարության մասնագետները կողմից գնահատվել են լավ: Նախատեսված է աշխատանքներն ավարտվել ընթացիկ տարվա հուլիսի վերջին:

● *Անցած 1 օրում գրանցվել է 17 ավտովթար. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱՐԱՔՍ»

ԱՄԵՆ ՕՐ 10 ՏՈՆՆԱ ԹՌՉՆԱՄԻՍ ԵՎ 400 ՀԱԶԱՐ ՀԱՎԿԻԹ

Շուրջ 30 տարի «Արաքս» թռչնաֆաբրիկան ամեն օր հայկական շուկան ապահովում է թարմ թռչնամսով եւ հավկիթներով: Թռչնաֆաբրիկան ամեն օր արտադրում եւ իրացնում է ավելի քան 10 տոննա հավի միս, որը կազմում է Հայաստանում օրական սպառվող թռչնամսի մինչեւ 40%-ը, ինչպես նաեւ 400.000 հավկիթ, ինչը Հայաստանում 1 օրում սպառվող քանակի կեսից ավելին է: Թռչնաֆաբրիկայում արտադրությունն ավտոմատացված է. գործող 25 թռչնանոցներին կերի տրամադրումը, հավկիթների տեղափոխումն արտադրական միջավայր, ինչպես նաեւ տեսակավորումն իրականացվում է եվրոպական բարձրակարգ սարքավորումների միջոցով: Որակի ապահովմամբ եւ վերահսկողությամբ եւս թռչնաֆաբրիկան շուկայում առաջատարներից է: «Արաքս» թռչնաֆաբրիկայի գործընկերը լիզինգային շուկայի առաջատար Ակբա Լիզինգն է, որի աջակցությամբ էլ արտադրությունը համալրվել է անհրաժեշտ տեխնիկայով եւ սարքավորումներով՝ բեռնատար մեքենաներով, ամբարձիչով, գեներատորներով ու բարձր հզորությամբ արեւային կայանով, որը թռչնաֆաբրիկայում տեղադրել է Ակբա Լիզինգի մեկ այլ գործընկեր՝ «Սան Պրովայդեր» ընկերությունը:

«Թռչնաֆաբրիկայի արտադրության ամբողջ գործընթացն ավտոմատացված է: Մեր արտադրանքը շուկայում տարբերվում է իր բարձր որակով, սպառողների ընտրությամբ եւ դրա շնորհիվ է, որ ամեն տարի մենք պահպանում ենք առաջատարի դիրքերը: Ակբա Լիզինգի միջոցով ձեռք բերված սարքավորումները մեզ հնարավորություն են տալիս էլ ավելի զարգացնել արտադրությունը եւ որակապես լավ արտադրանք ստանալ: Թռչնաֆաբրիկայում տեղադրել ենք նաեւ արեւային կայան, որի շնորհիվ բավականաչափ էներգիա ենք խնայում»,- նշել է «Արաքս» թռչնաֆաբրիկայի մարքեթինգի բաժնի ղեկավար Սեդա Հովսեփյանը:

«Ակբա Լիզինգի ֆինանսավորմամբ «Արաքս» թռչնաֆաբրիկայում տեղադրվեց 2550 հատ Jinko Solar վահանակ եւ 15 Huawei ինվերտորներ, որոնց արդյունքում ունեցանք 1500 կՎտ դրվածքային հզորությամբ արեւային կայան: Արեւային կայանի արտադրանքը տարեկան կազմելու է 2.2 միլիոն կՎտ/ժ, որը համեմատության համար, կարելի է ասել, տարեկան 600-ից 700 բնակարանի հոսանքի սպառումն է»,- նշել է «Սան Պրովայդեր» ընկերության տնօրեն Վահան Օհանջանյանը: «Արաքս» թռչնաֆաբրիկան շարունակում է ընդլայնել իր տեսականին եւ ներկայանալ նոր արտադրատեսակներով: Ընկերությունն արդեն շուկա է ներկայացնում նաեւ հավի մսից պատրաստվող կիսաֆաբրիկատներ ու նրբերշիկներ:

Ակբա Լիզինգի 100% բաժնետերն Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Գ

ՃԱՆԱՉԵԼ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՆՈՐՈՎԻ

«Անտարես» հրատարակչական կողմից լույս է տեսել գրող, պատմավիպասան Սասուն Վարդանյանի «Աստծուն եմ հագել ներսից եւ դրսից. Գրիգոր Նարեկացի» գիրքը: Հայէկոնոմբանկի աջակցությամբ տպագրված աշխատությունը ժամանակակից ընթերցողի համար բացահայտում է այն աղբյուրները, որոնց ազդեցությամբ ձեւավորվել են Գրիգոր Նարեկացու գեղագիտական հայացքներն ու ըմբռնումները:



Սասուն Վարդանյանը մեկ տասնյակից ավելի գրքերի՝ պատմվածքների, հեքիաթների, վիպակների, վեպերի հեղինակ է: «Նարեկացին, որպես մարդկային հոգու ամենամեծ արտահայտություն՝ արժանի է յուրահատուկ վերաբերմունքի, եւ պետք է նարեկագիտությունը, որ սկսվել է տարերայնորեն, իր վերելքն ապրի գիտակցաբար», - գրքում նշում է հեղինակը:

«Սասուն Վարդանյանը, դիմելով մեր հանճարեղ Գրիգոր Նարեկացուն, ուզեց լինել ուսուցող: Հեղինակը հերքում է այն բոլոր կարծիքները, որ Նարեկացին ստեղծագործել է արաբական, պարսկական կամ հունական մշակույթների ազդեցությամբ: Ծանոթ լինելով, որ Հայէկոնոմբանկի ղեկավարությունը կրում է ազգային արժեքներ՝ համոզված էի, որ նրանք կգնահատեն եւ կաջակցեն գրքի հրատարակչական աշխատանքներին: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում գրքի հրատարակությունն իրականություն դարձնելու համար», - նշում է Սասուն Վարդանյանի կինը՝ գրող, հրապարակախոս Սիլվա Սուքիասյանը, ով ամուսնու մահից հետո հետամուտ է եղել գրքի հրատարակմանը:

«Հայէկոնոմբանկի համար նման նախագծերը ներդրում են մեր մշակութային ժառանգության պահպանման գործում: Նարեկացին հայ ինքնության առանցքային խորհրդանիշներից է, իսկ Սասուն Վարդանյանի այս աշխատությունը հնարավորություն է նորովի ճանաչելու Նարեկացուն: Ուրախ եմ, որ Հայէկոնոմբանկը մասնակցել է նման արժեքավոր գրքի լույսընծայմանը», - նշում է Հայէկոնոմբանկի Մարքեթինգի բաժնի պետ Արման Տոնիկյանը:

Գիրքը վաճառքի ենթակա չէ: Այն տրամադրվելու է Վենետիկի Մխիթարյան միաբանության, Վաշինգթոնի Կոնգրեսի, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, Մատենադարանի եւ Հայաստանի ազգային գրադարաններին, ինչպես նաեւ համալսարանական գրադարաններին, Գյումրիի, Գորիսի եւ Վանաձորի քաղաքային գրադարաններին:

ԼՈՒՐԵՐ

50% ԶԵՂՉ՝ AEB TRAVEL ՓԱԹԵԹՈՎ

Ճամփորդական արտոնությունները երբեք շատ չեն լինում: Հայէկոնոմբանկն ընդլայնում է AEB Travel ճամփորդական փաթեթի արտոնությունների շրջանակը: Այսուհետ Բանկի պրեմիում քարտապանները inLobby տուրիստական ընկերությունում հյուրանոց ամրագրելիս կստանան 50% զեղչ՝ Շենգենյան գոտու, Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի մուտքի արտոնագրերի (վիզայի) աջակցության ծառայությունների համար:

AEB Travel փաթեթն այն հաճախորդների համար է, ովքեր ունեն կամ ձեռք կբերեն Հայէկոնոմբանկի VISA Platinum, VISA Infinite, VISA Guru Travel եւ Mastercard World քարտատեսակներից որեւէ մեկը:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ԳՈՒՄԱՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք ռազմավարական նշանակության արհեստական բանականության գործարան կառուցելու ծրագրի շրջանակում առաջակվում է ձեռք բերել «Ֆայրբրրդ էյԱյ» ՓԲԸ-ից հատուկ եւ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված, առաջատար գրաֆիկական պրոցեսորների հզորություն: 2026 թ. ապրիլի 17-ին կնքվել է պայմանագիր ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ «Ֆայրբրրդ էյԱյ» ՓԲԸ-ի միջեւ: «Ֆայրբրրդ էյԱյ» -ը հանդիսանում է արհեստական բանականության ամպային եւ ենթակառուցվածքային ընկերություն, որը տրամադրում է մեծածավալ GPU հաշվողական ռեսուրսներ, որոնք նախատեսված են արհեստական բանականության ժամանակակից մոդելների ուսուցման եւ գործարկման, գիտական հետազոտությունների համար: Համակարգերը կառուցված են բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներ պահանջող «պահանջկոտ» առաջադրանքներին աջակցելու համար:

Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել 2026թ.-ին գործարկել կովկասյան տարածաշրջանում առաջին եւ ամենամեծ արհեստական բանականության սուպերհամակարգիչը՝ աշխատող NVIDIA Blackwell գրաֆիկական պրոցեսորներով: Ծրագիրն աննախադեպ է Հայաստանի Հանրապետությունում եւ իրականացվելու է բացառապես Ընկերության կողմից՝ վերջինիս՝ միջազգային գործընկերների (այդ թվում՝ ԷՆՎԻԴԻԱ ամերիկյան ընկերության) հետ ունեցած ռազմավարական գործընկերային հարաբերությունների շնորհիվ: Կառավարությունն ընդունել է որոշում, որով առաջարկվում է իրականացնել վերաբաշխում եւ 957,876,440 դրամ հատկացնել «Արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսների /գրաֆիկական պրոցեսորների/ հզորության ձեռքբերում» միջոցառմանը: Միջոցառման նպատակն է հզորացնել ՀՀ-ի տեխնիկական հնարավորությունները եւ զինել այն 21-րդ դարի լուրջ ենթակառուցվածքներով: ՀՀ-ում ստեղծել արհեստական բանականության ժամանակակից տվյալների կենտրոն՝ հիմնված ամերիկյան «NVIDIA» ընկերության առաջատար տեխնոլոգիական լուծումների վրա: Այս ծրագիրը գալիս է աջակցելու արհեստական բանականության ոլորտում գործունեություն իրականացնող ստարտափներին, գիտահետազոտական խմբերին, ուսումնական հաստատություններին, անհատ մասնագետներին, ինչպես նաեւ հանրային իշխանության մարմիններին՝ ապահովելով բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներ արհեստական բանականության համակարգերի նախագծման, ուսուցման եւ տեղակայման համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Օլեսյա Դենիսովաս, կորցրել եմ իմ անձնագիրը, տրված՝ 2015թ. մարտի 20-ին, 8099 մարմնի կողմից, անձնագրի համարը՝ FA 164938:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՔՆԱՀԵՐԹՈՒԹՅՈ՞Ւ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

«Արցախի մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Արտես Մարգարյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ անդրադառնալով Արցախի մշակութային ինքնության պաշտպանության, արցախյան խորհրդանիշների նկատմամբ առձանագրվող սահմանափակումներին եւ մշակութային իրավունքների պահպանման խնդրին: Նա ընդգծել է, որ առանձին դեպքերի կուտակումը ձեւավորում է համակարգային միտում, որի հետեւանքով հանրային դաշտում ասիճանաբար նորմալացվում է Արցախի մասին լռելու եւ նրա մշակութային խորհրդանիշներից խուսափելու պրակտիկան՝ կոչ անելով պետական մարմիններին, իրավապաշտպան կազմակերպություններին եւ միջազգային կառույցներին պաշտպան ուշադրություն դարձնել բարձրացված խնդիրներին:

«Արցախի մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Ապրես Մարգարյանի հայտարարությունը ներկայացնում ենք ստորեւ.

««Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ-ն հետեւողականորեն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից արցախյան մշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ չեն ձեռնարկվում համապատասխան քայլեր: Չնայած միջազգային իրավունքի շրջանակներում առկա հնարավորություններին՝ պետական մակարդակով լիարժեք չեն օգտագործվում համապատասխան մեխանիզմները. չեն նախաձեռնվում գործընթացներ ՅՈՒՆԵՍԿՕ-ում, ՄԱԿ-ի համապատասխան մարմիններում եւ այլ միջազգային հարթակներում, չեն ներկայացվում իրավական հիմնավորումներով զեկույցներ, հաղորդումներ կամ դատական նախաձեռնություններ՝ արցախյան մշակութային ժառանգության դեմ կատարվող խախտումները փաստագրելու, դրանց կանխարգելմանն ուղղված քայլեր ձեռնարկելու եւ միջազգային պատասխանատվության մեխանիզմները գործադրելու նպատակով:

Փաստ է, որ խնդիրը չի սահմանափակվում միայն պետական անգործությամբ: Մտահոգիչ են նաեւ Հայաստանի Հանրապետության ղեկավարության հրապարակային հայտարարությունները, որոնցով Արցախի հայկական եկեղեցիների եւ մշակութային ժառանգության պահպանության հարցը ներկայացվում է որպես Ադրբեջանի ներքին գործ: Նման հայտարարությունները փաստացի թուլացնում են Հայաստանի իրավաքաղաքական դիրքերը եւ կարող են բացասաբար անդրադառնալ միջազգային հարթակներում հետագա իրավական նախաձեռնությունների արդյունավետության վրա:

Այսպես, պետական մակարդակում ձեւավորվում է մի իրավիճակ, երբ միջազգային մեխանիզմների չօգտագործումը զուգակցվում է այնպիսի հռետորաբանության հետ, որը միջազգայնորեն թուլացնում է հենց այն իրավական հիմքերը, որոնց վրա հնարավոր կլիներ կառուցել ապագա պաշտպանական քայլերը:

Այս ընդհանուր անտարբերության ֆոնին հանրային լայն արձագանք ստացան տեղեկությունները, համաձայն որոնց՝ ՀՀ-ում գործող մշակութային որոշ կոլեկտիվների տրվել են ներքին հանձնարարականներ իրենց ստեղծագործությունների անվանումներից հանել «Արցախ» բառը: Տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով ՀԿ-ն տեղեկություն ստանալու պաշտոնական հարցում է ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն: Նախարարության պատասխանում նշվել է, որ նախարարությունը եւ դրա ենթակայության կազմակերպությունները որեւէ գրավոր կամ բանավոր հանձնարարական

չեն ստացել մշակութային ստեղծագործություններից կամ պատմամշակութային նյութերից «Արցախ» անվանումը հանելու վերաբերյալ: Նույն պատասխանում հաստատվում է նաեւ, որ նախարարության ենթակայության հաստատություններում Արցախի խորհրդանիշների ցուցադրման վերաբերյալ որեւէ արգելք սահմանված չէ:

Թեեւ նախարարության պատասխանը պաշտոնապես հերքում է նման հանձնարարականի առկայությունը, հանրային դաշտում շրջանառվող տեղեկությունները վկայում են, որ արցախյան ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ ոտնձգություններ, այնուամենայնիվ, տեղի են ունենում գործնականում՝ առանձին հաստատությունների ու անհատների մակարդակով, նույնիսկ եթե դրանք չեն բխում պաշտոնական հրահանգից:

Հենց այս համատեքստում, որպես նկարագրված ընդհանուր միտման կոնկրետ դրսեւորում, կարելի է դիտարկել վերջերս Երեւանի Անուշավան Տեր-Ղեւոնդյանի անվան երաժշտական դպրոցում տեղի ունեցած միջադեպը:

Ցուցահանդես-մրցույթի ընթացքում դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը մրցույթի աշխատանքների տաղավարից հեռացրել է աշակերտներից մեկի ձեռքով նկարված աշխատանքը, որում պատկերված էր Ստեփանակերտի «Մենք ենք մեր սարերը» («Տատիկ-պապիկ») հուշարձանը, այն որակելով «հակապետական քայլ»: Պարզաբանումներ ստանալու նպատակով՝ ՀԿ-ն պաշտոնական գրություն է հասցեագրել Երեւանի քաղաքապետարանին: Ի պատասխան՝ քաղաքապետարանը ներկայացրել է «Ա. Տեր-Ղեւոնդյանի անվան հ. 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի գրավոր պարզաբանումը՝ առանց դեպքի վերաբերյալ սեփական գնահատականը ներկայացնելու:

Տնօրենի բացատրությունը, թե նկարը հանվել է պատից բացառապես ներքին կարգապահական կանոնների խախտման հիմքով (քանի որ այն փակցվել էր առանց տնօրինության հետ նախնական համաձայնեցման), հիմնավոր չի թվում. ցուցադրված աշխատանքը համապատասխանում էր մրցույթի ընդհանուր թեմատիկային, եւ հեռացվել է հենց միայն Արցախի հուշարձանը պատկերող նկարը, ինչը հարցեր է առաջացնում որոշման իրական դրդապատճառների վերաբերյալ: Նշանակալից է նաեւ, որ տնօրենի ներկայացրած պարզաբանման մեջ հուշարձանի պաշտոնական անվան («Մենք ենք մեր սարերը») փոխարեն օգտագործվել է «Տատիկների, պապիկների պատկերը» ձեւակերպումը, ինչը դժվար է դիտարկել որպես պատահական լեզվական վրիպում՝ հատկապես կրթական հաստատության ղեկավարի պաշտոնական տեքստում: Հատկանշական է նաեւ, որ միջադեպից կարճ ժամանակ անց աշակերտի ուսուցչուհին, չհամակերպվելով կատարվածի հետ, դիմումով ազատվել է աշխատանքից:

Այս դեպքի նշանակությունը դուրս է դպրոցական միջադեպի շրջանակից: Եթե Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում վտանգված է արցախյան մշակութային ժառանգության նյութական բաղադրիչը՝ եկեղեցիները, հուշարձաններն ու պատմամշակութային արժեքները, ապա Հայաստանում առանձնահատուկ ուշադրության կարիք ունի դրա ոչ նյութական բաղադրիչը՝ մշակութային հիշողությունը, պատմական անվանումները, խորհրդանիշներն ու ինքնությունը: Երկու գործընթացներն էլ, թեեւ տարբեր դրսեւորումներով, ազդում են նույն մշակութային ժառանգության շարունակականության վրա. մեկը՝ ֆիզիկական ոչնչացման, մյուսը՝ հիշողությունից ու հանրային տարածությունից աստիճանական հեռացման միջոցով:

Կարեւոր է հասկանալ, որ նման առանձին դեպքերի կուտակումը՝ անկախ նրանից, թե դրանք բխում են կենտրոնացված հրահանգից, թե առանձին պաշտոնյաների նախաձեռնությունից, ձեւավորում է համակարգային ազդեցություն. հանրության մեջ աստիճանաբար նորմալացվում է Արցախի մասին լռելու կամ դրա հետ կապված խորհրդանիշներից խուսափելու պրակտիկան:

Մշակութային ինքնության պահպանության իրավունքը միջազգայնորեն սահմանված մարդու իրավունք է, որը բխում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից եւ ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում եւ մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթերում: Այս իրավունքը որեւէ պարագայում չի կարող դառնալ քաղաքական սակարկությունների առարկա:

Հարկ է հիշեցնել նաեւ, որ ՀՀ կառավարության կողմից ընդունված 2023-2027 թվականների մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման ռազմավարությամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի մշակութային իրավունքների պաշտպանությունը, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանումը, գույքագրումն ու սերունդներին փոխանցումը սահմանվել են որպես պետական առաջնահերթություններ: Ռազմավարությամբ ուղղակիորեն արձանագրվում է, որ 2023 թվականի սեպտեմբերյան իրադարձություններից հետո ընդհատվել է Լեռնային Ղարաբաղի հայության մշակութային ինքնության փոխանցման բնականոն շղթան:

Հենց այստեղ է ի հայտ գալիս հիմնական հակասությունը. պետական մակարդակով հռչակված քաղաքականությունը եւ առօրյա գործնական դրսեւորումները չեն համընկնում: Ինչպես ցույց է տալիս երաժշտական դպրոցի օրինակը, առանձին հաստատություններում կայացվող որոշումները կարող են ուղղակիորեն հակասել պետության կողմից ինքն իր առջեւ դրված նպատակներին՝ առանց դրա համար որեւէ պատասխանատվության կամ նույնիսկ պաշտոնական գնահատականի:

Համադրելով վերոնշյալ դրսեւորումները՝ միջազգային մեխանիզմների չօգտագործում, ներքին հանրային դաշտում արցախյան խորհրդանիշների աստիճանական մարգինալացումը, առանձին հաստատություններում արձանագրվող կոնկրետ դեպքեր ու մի շարք այլ իրողություններ, ակնհայտ է դառնում, որ խնդիրը համակարգային է եւ պահանջում է ոչ թե առանձին միջադեպերի արձագանք, այլ հետեւողական պետական քաղաքականություն:

Սույնով հրավիրվում է միջազգային եւ տեղական իրավապաշտպան կազմակերպությունների, մշակութային ժառանգության պահպանությամբ զբաղվող կառույցների, պետական պատասխանատու մարմինների, ինչպես նաեւ լրատվամիջոցների ուշադրությունը այս հայտարարության մեջ ներկայացված փաստերի եւ արձանագրված մտահոգությունների վրա:

Ապրես Մարգարյան՝ «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵՍՍԻՆ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Արգենտինայի ազգային հավաքականի հարձակվող Լիոնել Մեսսին մեկնաբանություն է տվել 2026 թվականի աշխարհի առաջնության կիսաեզրափակիչի՝ Անգլիայի ընտրանու դեմ կայացած խաղից հետո (2-1), որի արդյունքում արգենտինացիները նվաճել են մրցաշարի եզրափակիչի ուղեգիր:

«Յուրաքանչյուր եզրափակիչ առանձնահատուկ է: Սա աշխարհի առաջնության եզրափակիչ է, եւ նրանցից յուրաքանչյուրը յուրովի եզակի է: Կրկին նման էմոցիաներ ապրելն անհավանական է: Կարծում եմ՝ այն, ինչի հասել է այս թիմը, իսկական խելագարություն է՝ աշխարհի առաջնության երկու եզրափակիչ անընդմեջ:

Ինչ վերաբերում է անձամբ ինձ, ապա աշխարհի առաջնության երեք եզրափակիչում խաղալ հաջողվել է շատ քիչ ֆուտբոլիստների: Հատկապես, եթե հաշվի առնենք այս մրցաշարի ընթացքը, այս հանդիպման բովանդակությունը, մեր մրցակցի ինքնությունը եւ այն, թե հատկապես ում մենք կարողացանք հաղթել: Անհավանական բաներ տեղի ունեցան:

Թեեւ խաղից առաջ մենք ասում էինք, որ դա ընդամենը խաղ է, օրհներգի կատարման ժամանակ սկսեցինք բոլորովին այլ, յուրահատուկ զգացումներ ունենալ: Ընդ որում, մենք չէինք մոռանում, որ սա, այնուամենայնիվ, ֆուտբոլային հանդիպում է: Մեզնից ոչ ոք չէր ցանկանում պարտվել, եւ Արգենտինայի ժողովուրդը նույնպես շատ էր ուզում այս հաղթանակը. ոչ ոք չէր ցանկանում զիջել Անգլիային: Մենք այս հանդիպումն ընկալում էինք հենց այդպես: Փառք Աստծո, մեզ հաջողվեց հասնել մեր նպատակին, դուրս թողնել նրանց մրցաշարից եւ դուրս գալ աշխարհի առաջնության եւս մեկ եզրափակիչ: Սա շատ երջանիկ օր էր բոլոր արգենտինացիների համար»,-armsport-ի փոխանցմամբ՝ Մեսսիի խոսքերը մեջբերում է Ole-ն:

Տիտղոսի համար վճռորոշ հանդիպումում Արգենտինայի ազգային հավաքականը հուլիսի 19-ին կմրցի Իսպանիայի ընտրանու դեմ:

ԻՆՏՐԻԳԱՅԻՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Ավարտվեցին 2026 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության կիսաեզրափակչի երկու հանդիպումները: Իսպանիայի հավաքականը 2:0 հաշվով վստահ հաղթանակ տարավ Ֆրանսիայի նկատմամբ, իսկ Արգենտինայի ընտրանին լարված պայքարում 2:1 հաշվով առավելության հասավ Անգլիայի դեմ խաղում: Մրցաշարի երրորդ տեղի համար կմրցեն Ֆրանսիայի եւ Անգլիայի հավաքականները: Բրոնզե մեդալների համար հանդիպումը կկայանա լույս հուլիսի 19-ի գիշերը: Խաղի մեկնարկը՝ Երեւանի ժամանակով 01:00-ին: ԱԱ-2026-ի մեծ եզրափակիչում տիտղոսի համար կպայքարեն Իսպանիայի եւ Արգենտինայի հավաքականները: Ոսկե մեդալների համար վճռորոշ հանդիպումը տեղի կունենա կիրակի՝ հուլիսի 19-ին, ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահանգի Իսթ-Ռեզերֆորդ քաղաքի «Մեթլայֆ» մարզադաշտում: Հիշեցնենք, որ աշխարհի գործող չեմպիոնն Արգենտինայի հավաքականն է, գրում է armsport-ը:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 18-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Առյուծն ու խաղալիքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կցանկանայի իմանալ գիտական (տեխնոլոգիական) վաՀտում զինվորական ծառայության անցնելու համար դիմելու եւ ընտրության կարգը:

Վահան Սիմոնյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. 1. Տեխնոլոգիական (գիտական) վաՀտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրություն անցկացվում է տեխնոլոգիական (գիտական) վաՀտում համալրման ենթակա թափուր հաստիքների առկայության դեպքում:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովն անցկացնում է մրցույթ, որի տեղի, օրվա եւ ժամկետի, վաՀտի համալրման ենթակա հաստիքների քանակի մասին իրազեկումն իրականացվում է www.mil.am կայքում եւ լրատվամիջոցներով: Մրցույթին կարող են մասնակցել առնվազն բակալավրի կրթական ծրագրով ավարտական վկայական ունեցող զորակոչիկները, որոնք կարող են մրցույթի անցկացման տեղի, օրվա եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում գրանցվել www.mil.am կայքում՝ լրացնելով համապատասխան հայտը, որի մասին տեղեկացնում են նաեւ Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը: Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները եւս իրականացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց հաշվառում, որի հիման վրա հաշվառված անձանց անվանացուցակները մրցույթի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են մրցութային հանձնաժողովի նախագահին: Անվանացուցակների հետ միասին ներկայացվում են նաեւ զորակոչիկների անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համապատասխան բարձրագույն կրթության ավարտական վկայականի պատճենները կամ, եթե առկա չէ ավարտական վկայական, համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ ավարտական քննությունները հանձնած լինելու վերաբերյալ, ինքնակենսագրությունը, զինվորական ծառայությանը առողջական վիճակի պատճառով պիտանիության աստիճանի (պիտանի կամ սահմանափակ պիտանի) վերաբերյալ տեղեկանքը: Զորակոչիկը մրցույթին ներկայանալիս իր հետ պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ, իսկ mil.am կայքում գրանցված լինելու դեպքում՝ նաեւ սույն կետով նախատեսված այլ փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարի 25.06.2018թ. N 8-Ն հրամանի հավելված 7-ի 2-րդ կետի համաձայն հաշվառված զորակոչիկների առողջական վիճակի հետազոտումը եւ փորձաքննությունն իրականացվում է առաջնահերթ:

ՀՀ պաշտպանության նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞r դեղfում է բաղաfացիական ծառայողի համար նշանակվում ծառայողական բնություն:

Մարինե Կիրակոսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծառայողական քննություն նշանակվում է ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու եւ (կամ) ոչ պատշաճ կատարելու եւ (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու եւ (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու եւ (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու եւ (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու եւ (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում, ինչպես նաեւ քաղաքացիական ծառայողի գործունեությանն առնչվող եւ (կամ) աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերի պարզաբանման դեպքերում:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արտակարգ դեպք եւ փլուզում Կոտայքի մարզի «Արգել» ՀԷԿ-ում. քաղաքացիները փլատակների տակից դուրս են բերել 2 տուժածի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14	+ 22 + 27
Կոտայքի լեռներ	+ 8 + 13	+ 23 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 16 + 18	+ 28 + 31
Գեղարքունիք	+ 10 + 15	+ 21 + 26
Լոռի	+ 12 + 16	+ 23 + 27
Տավուշ	+ 13 + 16	+ 24 + 27
Արագածոտնի լեռներ	+ 8 + 12	+ 22 + 26
Արագածոտնի նախալեռներ	+ 15 + 19	+ 28 + 33

Արարատ	+ 16 + 19	+ 31 + 34
Արմավիր	+ 17 + 20	+ 33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13	+ 22 + 26
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 21	+ 32 + 35
Սյունիքի լեռներ	+ 9 + 13	+ 19 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17	+ 23 + 26
Սյունիքի հովիտներ	+ 20 + 24	+ 30 + 33
Երեւան	+ 19 + 21	+ 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*